

ՆՈՒՆԵ ԱՌՄԵՈՅԻ ԱԹԱՆԱՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ
E-mail. nune.atanasyan@gmail.com

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆԻ ՀԱՅ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆԻ ՆՈՐ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ՝ ՍՊԻՏԱԿ-1975

XX դարում հայ ժողովրդական երաժշտությունը շարունակում էր ապրել ժողովրդի հիշողության մեջ և, որպես բանավոր ավանդույթ, կազմում էր ժողովրդի կենցաղի անբաժանելի մասը: Դրա հավաքման և ուսումնասիրման ուղղված աշխատանքները XX դ. երկրորդ կեսից արդեն կազմակերպված բնույթ են կրում: շարունակվում է ժողովրդական երգերի հավաքման, համակարգման ու հրատարակման գործընթացը: Ժողովրդական երգի հանդեպ հետաքրքրությունը նկատելի է և Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանում, ինչպես երաժշտագետ-ֆոլկլորագետների, այնպես էլ մշակույթի այլ գործիչների աշխատանքներում: Բոլորին միավորում է մի կարևոր նպատակ՝ պահել և պահպանել ապագա սերունդների համար հակական ավանդական երգն ու բանը, հասանելի դարձնել լայն ունկնդրի համար ժողովրդական մշակույթն իր բոլոր դրսևորումներով:

XX դարի առաջին տասնամյակներից մեծ թափ է առնում ոչ միայն երաժշտագիտությունը, այլև ֆոլկլորագիտությունը, որպես ինքնուրույն գիտություն: Բացառիկ կարևորություն են ներկայացնում ժամանակի հայ ժողովրդական երաժշտության ուսումնասիրությունները, որոնք երկար տարիների պրպտումների, որոնումների արդյունք են հանդիսանում: Այսպես, բանահավաքչական, հրատարակման աշխատանքների շնորհիվ հայ գեղուկ երգը դարձավ հայ երաժշտության դիմանկար, հիմք դարձավ հայ դասական կոմպոզիտորական արվեստի համար և ներկայացրեց աշխարհին իր ուրույն տեսակը, հարուստ և միայն իրեն բնորոշ գունեղությամբ: Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնն իր ամբողջ գործունեության ընթացքում կատարել է հայագիտական, ուսումնական և բանահավաքչական աշխատանքներ, որոնց շնորհիվ նպաստել է հայ ժողովրդական երգի ուսումնասիրման, դասակարգման և հրատարակման գործընթացին:

Հայ ժողովրդական երգի ուսումնասիրման աշխատանքներից առաջնահերթ է բանահավաքչական աշխատանքը: Շարունակելով հայ երախտավորների՝ Սահակ

Ամատունու, Կոմիտաս Վարդապետի, Սպիրիդոն Մելիքյանի, Ստեփան Դեմոյանի կողմից կատարած բանահավաքչական գործունեությունը, հայ ֆոլկլորագիտության ամբիոնի գիտաաշխատողները շարունակում են այդ գործընթացը մինչև այսօր:

Այսպես, 1969 թ. Մարգարիտ Բրուտյանի ջանքերով հիմնադրված Հայ ժողովրդական ստեղծագործության կաբինետն ստեղծման իսկ պահից կցվեց հայ ավանդական երգ ու բանի հավաքչական, նոտագրման և հրատարակչական աշխատանքերին:

Կաբինետի հիման վրա ստեղծված Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը, ծավալելով իր գործունեությունը Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանակներում՝ այս գիտական աշխատանքները համատեղեց նաև ուսումնական պրոցեսի հետ, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ ուսանողներին ևս հաղորդակից դարձնել ֆոլկլորագիտական աշխատանքներին: Կազմակերպվում են գիտարշավներ, որոնց մասնակից են դառնում ուսանողները, այդ հավաքագրված նյութը նոտագրվում է նույնպես ուսանողների հետ, ինչը հնարավորություն է տալիս ծանոթանալ աշխատանքային պրոցեսին և առանձնահատկություններին, օգնում է ուսանողներին ոչ միայն մասնագիտական ընտրություն կատարել, այլև ճանաչել հայ ավանդական մշակույթը, երգ ու բանը, ժողովրդական երգարվեստի կիրառության և գործածման բնագավառները և այլն:

Ամբիոնի 50-ամյա գործունեության ընթացքում կատարված բազմաթիվ գիտարշավների ընթացքում հավաքվել է ահռելի քանակության նյութ, որը նոտագրվում է, դասակարգվում և պատրաստվում է հրատարակության:

Ամբիոնի կողմից հիմնադրված «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարում հրատարակվում են տարբեր տարիների ընթացքում հավաքված ժողովրդական երգեր, պարեղանակներ, գործիքային կատարումներ, որոնք ներկայացված են գիտական ապարատով, այսինքն երգերը բազմակողմանիորեն մեկնաբանված են, բերված է օտարալեզու և բարբառային բառարան, ծանոթագրություններ, ներկայացված են երգերի կատարողների կեն-

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի՝ 22.11.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 26.11.2021 թ., ներկայացրել է հեղինակը՝ 20.11.2021 թ.

սագրական տվյալներ, ինչը հնարավորություն է տալիս տեղեկություններ քաղել երգերի պատմական ծագման մասին:

Արդեն լույս է տեսել մատենաշարի 15 հատոր, և պատրաստ են հրատարակության ևս մի քանի պրակ: Այսպիսով, Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի գործունեությունը նպաստում է հայ ավանդական երգի գիտական ուսումնասիրման ընթացքին:

Ստորև ներկայացնում ենք «Մայիտակ-1975» բանահավաքչական նյութը: Այն կազմում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի կողմից հրատարակվող «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» մատենաշարի 14-րդ հատորը, որի կազմման, գիտական ապարատի, ինչպես նաև հրատարակչական խմբագրական աշխատանքը կատարել է տողերիս հեղինակը:

Տվյալ ժողովածուի նյութը ձայնագրվել է 1975 թ.: Երևանի կոնսերվատորիայի ժողովրդական ստեղծագործության կաբինետի ղեկավար Մարգարիտ Բրուսյանի կազմակերպած գիտական խումբը, որի կազմում էին լաբորանտ Մանուկ Մանուկյանը, և երաժշտագիտական բաժնի հինգ ուսանող՝ Մ. Խարազյան, Կ. Բաղայան, Ռ. Աղայան, Գ. Մելիքսեյան, Ռ. Բեժանյան նոյեմբերի 18-23 մեկնել է Մայիտակի շրջան՝ բանահավաքչական աշխատանքներ կատարելու: Գիտարշավի ընթացքում արշավախումբը երգեր է ձայնագրել Մայիտակ քաղաքում, Մեծ Պարնի, Օադկաբեր, Գոգարան, Թափանյի, Նալբանդ, Սարամեջ, Չիքդամալ գյուղերում: Բանահավաքչական նյութը կազմել է 320 նմուշ: Ինֆորմանտները տարբեր տարիքային խմբերի են պատկանում՝ դպրոցական տարիքի երեխայից մինչև 104 տարեկան՝ ավանդական երգի մեծ պաշարով հարուստ կատարող:

Հրատարակված ժողովածուն նվիրված է 1988 թ. Մայիտակի երկարաշարժի հետևանքով զոհվածների հիշատակին: Ինչպես գիտենք, Մայիտակը և հարակից գյուղերը հատկապես Թափանյի, Նալբանդ գյուղերն արհավիրքի հետևանքով անվերադարձ մարդկային կորուստներ ունեցան: Ոստի 1975 թվականին ձայնագրված նյութը ըստ էության պատմության համար պահպանեց այս տարածաշրջանի երաժշտական բանահյուսությունը:

Բնակիչներից շատերն այս տարածաշրջան գաղթել են Պատմական Հայաստանի տարբեր շրջաններից՝ Կարսից, Մուշից, Էրզրումից՝ բերելով իրենց ծնողներից և պապերից սովորած բանահյուսությունը և մշակույթը: Այսպես է ավանդական երգ ու բանը տարածվում տեղից տեղ և օրինակ՝ Մայիտակ տեղափոխվելով Մուշից, պահպանում է այդ տարածաշրջանի մշակույթը, նոր արմատներ է գցում, խառնվում տեղական հող ու ջրին և դառնում հին սովորույթների և հիշողությունների վրա հիմնված նոր ավանդույթ:

Մարգարիտ Բրուսյանի ղեկավարած գիտարշավի ընթացքում ձայնագրված նյութն առանձնանում է բազմազանությամբ: Քանի որ նյութը բավականին ծավալուն է, հրատարակության պատրաստելիս այն բաժանել ենք երկու մասի. մեկը ներկայիս ժողովածուն է, որտեղ զետեղված

են գեղջկական երգերն՝ իրենց հարուստ ու բազմազան ժանրերով: Այստեղ ներկայացված են աշխատանքային երգեր, օրորներ, ողբերգեր, կատակերգեր, քնարական երգեր: Առավել ծավալուն է, իհարկե, պարերգերի, բաժինը, և, ինչը հատկանշական է, մեծ տեղ են զբաղեցնում նաև ծիսական երգերը՝ համալրված նաև ժողովրդական հոգևոր երգերով:

Մայիտակ-1975 գիտարշավի ամբողջական նյութը, որն ինչպես նշեցինք բաղկացած է 320 նմուշից, ներառում է նաև աշունդական երգեր, սիրավեպերից հատվածներ, հեղինակային երգեր և գործիքային կատարումներ: Նպատակահարմար է այս ծավալուն նյութը հետագայում ներկայացնել երկրորդ հատորով: Առաջին հատորում զետեղված 148 երգերը դասակարգված են ըստ ժանրերի: Բոլոր երգերի անձնագրային տվյալները ներկայացված են Օանթթագրություն, բերված են երգի ձայնագրման վայրը, ամսաթիվը, ինֆորմանտի անունը, ինչպես նաև երգը վերծանող երաժշտագետի և տեքստաբան մասնագետի տվյալները: Ժողովածուին հավելել ենք նաև Բառարան և Ինֆորմանտների մասին տեղեկություններ պարունակող բաժինը:

Նյութի ձայնագրություններից մինչև հրատարակչական աշխատանքներ երկար տարիներ են անցել: Ամբողջ նյութը ձայնագրելուց հետո երկարատև և լրջագույն մասնագիտական աշխատանքների շնորհիվ վերծանվել է երգերի մեղեդին և բանաստեղծական տեքստը: Այս գիտական գործընթացի և բանահավաքչական, և՛ վերծանության աշխատանքները կատարվում են կոնսերվատորիայի ուսումնական ծրագրի շրջանակներում, ինչի շնորհիվ ուսանողները հնարավորություն են ստանում ծանոթանալ այս աշխատանքին գործնականորեն, մասնագիտանալ և փորձ ձեռք բերել ֆոլկլորագիտության բնագավառում:

Բանահավաքչական աշխատանքներն ունեն իրենց առանձնահատկությունները. դա մի յուրատեսակ գործընթաց է, որը կատարելու համար հարկավոր է տիրապետել և՛ մարդկային յուրահատուկ հատկանիշների, և՛ այդ գործի համար հատուկ կարողության և կոչման, և՛ որոշակի գիտելիքների՝ տվյալ աշխատանքը կատարելու համար: Մակայն ամենակարևորը սերն է հայ ավանդական երգի հանդեպ, գեղջուկի կյանքի, կենցաղի և կատարվող աշխատանքի հանդեպ:

Վերծանության մասնագետները հաճախ կանգ են առնում բազմաթիվ բարդությունների առջև. օրինակ՝ երգերի կատարողները տարբեր բնավորության և օժտվածության տեր մարդիկ են. ոմանք նաև վառ արտահայտված երաժշտական լսողություն ունեն, ուստի երգի կատարումը հեղեղված է անձնություններով և ինտոնացիոն ոչ հստակ էլեկտրոնով: Այս ամենին գումարվում է նաև կատարողի տարիքը: Եթե ինֆորմանտը մեծահասակ է, ապա կատարումը հաճախ դժվար ընթացն էլ է, թերի է: Այս դեպքում գործի են դրվում վերծանողի բարձր մասնագիտական հմտությունները, գիտելիքները, ժողովրդական երգի առանձնահատկությունների իմացությունը: Երգերը վերծանվում են մանրակրկիտ և խնամքով՝ ջանք է գործադրվում պահ-

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

պանելու երգի բոլոր առանձնահատկությունները: Նոտագրության լուրջ խնդիրներից է նաև երգերի գրանցման մեթոդաբանության ընտրությունը: Այստեղ շատ կարևոր է պահպանել երգի մեղեդու և տեքստի առավել ճշգրիտ ֆիքսելու սկզբունքը: Քանի որ վերծանության աշխատանքներ կատարել են տարբեր ժամանակահատվածում աշխատող մասնագետներ, ուստի և մեթոդաբանությունը ինչ-որ չափով տարբերվում է:

Տվյալ ժողովածուն հրատարակության պատրաստելիս աշխատել ենք միակերպության բերել նոտագրության, տեքստի գրառման սկզբունքները: Անշուշտ, խմբագրման ընթացքում աշխատել ենք առավելագույնս խնամքով վերաբերվել արված վերծանություններին, սակայն և միակերպ գրանցել. օրինակ՝ ընտրել ենք բանալու մոտ դրված նշանների սկզբունքը, տոնայնությունները, երգի տարբերակների գրանցման կերպը և այլն: Ամեն երգի գրառման և մատուցման վերջնական տեսակն ընտրելու համար մանրամասն ուսումնասիրել ենք հնչող գիտարշավային նյութը՝ լսել ենք բոլոր կատարումները և մեկնաբանությունները, և մեր կողմից արված բոլոր փոփոխությունները և խմբագրական հավելումները վերցված են քառակուսի փակագծերի մեջ:

Սույն ժողովածուն հարուստ, բազմազան ու բազմաբովանդակ երաժշտական բանահյուսական նյութ է ներկայացնում: Այստեղ հանդիպում ենք հայտնի երգերի ծանոթ կամ նորահայտ տարբերակներ: Կան երգեր, որոնք երգվել են նոր և ծավալուն բանաստեղծական տեքստերով: Այս երգերի հավաքածուն, վստահ ենք, կհավելի հայ ժողովրդական երգերի շտեմարանը նոր, հայտնի և անհայտ երգերի տարբերակներով, թարմ նյութ կդառնա ֆոլկլորագիտական ուսումնասիրությունների համար:

Ժողովրդական երգը, բանավոր մշակույթ լինելով հանդերձ, մեր ժամանակներում նոտագրվելու և ամրագրվելու շնորհիվ է միայն պահպանում իր գոյությունն ու փոխանցվում սերունդներին: Այս երգերի գրանցված տարբերակները նոր շունչ ու կյանք են առնում միայն նոր կատարումների շնորհիվ: Ցավոք, դրանք արդեն ներկայա նում ես երկրորդային ֆոլկլոր՝ միջավայրից դուրս կատարվող երգեր, սակայն մեր ժամանակներում դա միակ տարբերակն է նոր կյանք հաղորդելու մեր նախնիների ստեղծագործական տաղանդի արգասիքը հանդիսացող հրաշալի երգերին:

Բանալի-բանը. Սպիտակ, հայ ժողովրդական երգ, ժողովածու, բանահավաքչություն, նոտագրություն, խմբագրում, հրատարակում:

Ключевые слова: Спитак, армянская народная песня, сборник, собирательство, нотация, редакция, издание.

Key word: Spitak, Armenian Folk Music, Song collection, Notation, Edition, Publication.

Տեղեկություններ հեղինակի մասին ԱԹԱՆԱՍՅԱՆ ՆՈՒՆԵ ՌՈՄԵՈՅԻ (1967թ. ք. Երևան): Ավարտել է 1990թ. ԵՊԿ-ի երաժշտագիտության բաժինը (ղեկ. Մ. Հարությունյան): 1993-ից առ այսօր դասավանդում է ԵՊԿ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում՝ դասախոս, դոցենտ (2017-ից), ամբիոնի վարիչ (2018-ից): Վարում է «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», «Հայ հոգևոր երաժշտություն» և «Նոր հայկական նոտագրություն» դասընթացները, նաև 2001-ից առ այսօր ԵՊԿ երաժշտության տեսության ամբիոնի դասախոս է՝ վարում է «Արևմտաեվրոպական երաժշտատեսական համակարգեր» և «Օպերային արվեստի տեսական հիմնահարցեր» դասընթացները: 2000-ից Հայաստանի պետական կամերային երգչախմբի արտիստ: 2008-2018թթ. եղել է «Հայ ասպետ» հեռուստախաղի երաժշտական փորձագետ և հանձնախմբի անդամ: Հեղինակ է «Հայ հոգևոր երաժշտություն» ուսումնական ձեռնարկի (2017թ.), «Ստեփան Դեմուրյան. հայ երաժշտական ֆոլկլորագիտության ակունքներում» մենագրության, «Հայ հոգևոր երգեր» դասագրքի՝ դպրոցականների համար, «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ԵՊԿ մատենաշարի 9, 11 և 14 հատորների կազմող-խմբագիր, մի շարք գիտական հոդվածների և դասախոսությունների, ինչպես նաև երաժշտական հրատարակությունների խմբագիր:

Сведения об авторе: АТАНАСЯН НУНЕРОМЕОВНА (род. 1967, Ереван). В 1990 г. окончила музыкаловедческое отделение ЕГК им. Комитаса (класс проф. М. Г. Арутюнян). С 1993 по сей день преподает на кафедре Армянской музыкальной фольклористики ЕГК. Доцент (2017), заведующая кафедрой (с 2018), читает курсы: Армянское народное музыкальное творчество, Армянская духовная музыка, Новая армянская нотопись. Одновременно с 2000 г. по сей день ведет курсы: Западноевропейские музыкально-теоретические системы и Теоретические основы оперного искусства на кафедре теории музыки ЕГК. С 2000 г. артистка Государственного камерного хора Армении. Автор учебного пособия для студентов консерватории “Армянская духовная музыка” (2017), монографии “Степан Демурян. У истоков армянкой музыкальной фольклористики” (2020), учебного пособия для музыкальных школ “Армянская духовная песня” (2020), составитель и редактор трех выпусков серии “Армянские народные песни и наигрыши” (ЕГК, серия изданий, вып. 9, 2013; вып. 11, 2014; вып. 14, 2021), также автор научных статей, редактор музыкальных изданий.

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Information about an author: ATANASYAN NUNE ROMEO (born in Yerevan, 1967). In 1990, she graduated from Musicological department of YKSC (prof. M. Harutyunyan). Since 1993 she works at the Department of Armenian Music Ethnography of YKSC. Associate professor (2017) and the head of the Department (2018), teaching subjects: "Armenian folk music", "Armenian sacred music", "New Armenian notation". Meanwhile, since 2000 she teaches subjects "Western European music-theoretical systems" and "Theoretical basis of Opera" in the Department of Theory of Music of YKSC. Since 2000 she is also a singer in Armenian National Chamber Choir. She is the author of "Armenian Sacred Music" handbook for the students of Conservatory (2017), monography "Stepan Demurian. At the origins of Armenian Music Folkloristics" (2020), handbook for music schools "Armenian Sacred Songs" (2020). She is also compiler and editor of three volumes of the series "Armenian Folk Songs and Melodies" (YKSC, vol. 9, 2013; vol. 11, 2014; vol. 14, 2021), as well as author of a number of articles, lectures and editor of music publications.

Резюме

Музыковед, кандидат искусствоведения, доцент ЕГК Нуне Ромеовна Атанасян.- "Новые издания кафедры Армянской музыкальной фольклористики. Спитак-1975".

В статье представлен вышедший в свет в 2021 году 14-ый выпуск серии "Армянские народные песни и наигрыши", в котором собраны материалы этнографической экспедиции в Спитакский район, организованной в 1975 году проф. Маргарит Брутян. Сборник является мемориальным и посвящается жертвам землетрясения 1988 г. Данный выпуск является первой частью, он представляет разнообразный жанровый спектр народного наследия и сведения о песенной культуре разных районов исторической Армении, таких, как Муш, Эрзрум, переселенных в Спитак в конце XIX-начале XX веков.

Summary

Musicologist, PhD Candidate, Docent of YSC Nune Romeo Atanasyan. - "About new publications of the Department of Armenian Music Ethnography. Spitalak-1975".

In the article we represent the 14th Volume of the Series "Armenian Folk Songs and Melodies", published in 2021, which is based on the materials of ethnographic expedition by prof. Margarit Brutyan in Spitalak region in 1975. The Volume is a Memorial to the victims of the earthquake of 1988. This volume is the first part, containing the various genre spector of this region's cultural heritage. It also distributes singing culture of various regions of Historical Armenia, such as Mush, Erzurum. People from there migrated to Spitalak in the end of the 19th and the beginning of 20th centuries.